Աննա
ՓԱԽԼՅԱՆ

Տնտեսագիտության
թեկնածու, դոցենտ

2006 թ. գերազանցությամբ ավարտել է ԵրՊՏԻ-ն (այժմ՝ ՀՊՏՀ)՝ «Համաշխարհային տնտեսագիտություն», իսկ 2010 թ.՝ ՀՊՏՀ ասպիրանտուրան՝ «Միջազգային տնտեսագիտություն» մասնագիտությամբ: 2012 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ ստանալով տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան:

2019 թ. ստացել է դոցենտի գիտական կոչում: «Ամբերդ» հետազոտական կենտրոնի հետազոտող է, ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի դոցենտ:

Վերապատրաստվել և դասախոսություններ է վարել եվրոպական մի շարք բուհերում: Հեղինակ է 46 գիտական և 9 գիտահանրամատչելի վերլուծական աշխատանքների:

ORCID ID https://orcid.org/0000-0002-5854-2473

ՄԶԿԻԹԱՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ «ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՆՎԱՃՄԱՆ» ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ...

DOI: 10.52174/2579-2989_2021_4_86

«...Եթե մզկիթը կառուցված է ոչ իսլամական հողի վրա, այն համարվում է Ալլահի նվաճած տարածք: Իսլամի աշխարհում դա անառարկելի ճշմարտություն է:»

Ռոբերտ Ենգիբարյան
Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՌԴ գիտության վաստակավոր գործիչ

Հիմնաբառեր. *իսլամական գաղափարախոսություն, մզկիթային դիվանագիտություն, մզկիթներ, շինարարություն, օտարերկրյա ֆինանսավորում*

Իսլամական առաջատար երկրները, ինչպիսիք են Թուրքիան, Սաուդյան Արաբիան և Կատարը, տևական ժամանակ է՝ ստանձնել են ամբողջ աշխարհում մզկիթաշինության զանգվածային ֆինանսավորման «սուրբ» առաքելությունը: Ընդ որում, հետևողական «մզկիթային դիվանագիտության» համատեքստում, մզկիթների կառուցումն ապահովում է ոչ միայն իսլամի կրոնական ներկայությունն աշխարհի տարբեր ծայրերում, այլև դիտարկվում որպես ներսից «տարածքների նվաճման» խաղաղ կամ այլընտրանքային ռազմավարություն: Հատկանշական է, որ տարեցտարի աննախադեպ ծավալներով ավելացող մզկիթների միայն մի մասն է նպատակային կառուցված, մինչդեռ նոր հիմնադրվողների գերակշիռ մասը գործունեություն է ծավալում մզկիթների վերափոխված այլ կրոնական սրբավայրերի տարածքներում:

Իսլամական կամ գերազանցապես մահմեդականներով բնակեցված երկրներում մզկիթներն առանցքային դերակատարում ունեն ազգային և կրոնական ինքնության պահպանման հարցում, քանզի, աղոթատեղի լինելուց զատ, դրանք իրականացնում են մահմեդական գաղափարախոսության կամ առաջատար մահմեդական երկրների աշխարհաքաղաքական շահերի քարոզչության գործառույթ:

Վերջին շրջանում մահմեդական հարուստ երկրները՝

Սաուդյան Արաբիան, Թուրքիան և Կատարը, տարաբնույթ բարեգործական հիմնադրամների միջոցով ֆինանսավորում են հազարավոր մզկիթների, կրոնական դպրոցների և կենտրոնների շինարարությունն ամբողջ աշխարհում, որոնց առաքելությունը բնավ չի սահմանափակվում աղոթքների, հոգևոր կրթության ու կրոնական ծիսակատարությունների կազմակերպմամբ: Նման քաղաքականությունը ստացել է «մզկիթային դիվանագիտություն» անվանումը[1]: Հովանավորող երկրները «մզկիթային դիվանագիտությունը» դիտարկում են որպես սեփական ազդեցության շրջանակների ընդլայնմանը միտված արտաքին քաղաքականություն:

Վերջին տարիներին առանձնակի արագացել են իսլամական բնակչության գերարագ քանակական աճը, վերաբնակեցումը ծերացող եվրոպական երկրներում՝ դրանց հետագա իսլամացման նպատակով, ինչն ակտիվորեն հրահրում են Թուրքիան, Սաուդյան Արաբիան, Պակիստանը, Կատարը և այլ մահմեդական երկրներ: «Այս գործընթացի դասական սխեման այսպիսի տեսք ունի՝ Նախ՝ քաղցած երիտասարդ կանանց ու տղամարդկանց, երեխաների զանգվածային միգրացիա, հետո նրանց համախմբում մզկիթների, իսլամական դպրոցների ու մեդրեսեների շուրջ, բուռն քանակական աճ նոր ու զգալիորեն ավելի բարենպաստ պայմաններում, մեկուսացված կյանք իրենց անկլավներում՝ որպես սոցիալական օգնություն պետության հատկացրած միջոցներով, ու նոր մզկիթների շինարարություն Թուրքիայի, Սաուդյան Արաբիայի, Կատարի և այլոց ուղարկած փողերով, հպատակագրում ու քաղաքացիության ձեռքբերում, ձեռնասուն հինգերորդ շարասյան ու քաղաքական կուսակցությունների ստեղծում, անվերջանալի բախումներ ու շարիաթի օրենքներով ապրող, չաշխատող մահմեդականներին նոր սոցիալական բարիքների տրամադրման պահանջներ»[2]:

Այս կերպ, եվրոպական պետությունները, մարդասիրական նկատառումներով ընդունելով քաղցող, ավազակների կամ նրանց ղեկավարների գնդակներից զոհվող ներգաղթյալներին, ապա վերջիններիս թույլ տալով մզկիթներ կառուցել, իրենց ներսում ստեղծում են «հինգերորդ շարասյուն»[3], որն ապրում է ինքնուրույնաբար՝ համաձայն շարիաթի կանոնների: Իսկ երբ եվրոպական պետությունները ներգաղթյալներից պահանջում են պահպանել օրենքները, ստիպում են, որ վերջիններս նրանց պատասխանեն ջիհադով: Պետք չէ անկոչ հյուրերին հրահրել սեփական քրիստոնեական տոներով (Մկրտություն, Սուրբ ծնունդ), խորհրդանիշներով և, հատկապես, կանանց կարճ շրջազգեստներով՝ «հարկադրելով» դիմելու սեռական բռնության կամ ահաբեկչական գործողության: «Եթե իսկապես քաղաքակիրթ եք, պետք է համբերեք. չէ՞ որ ձեր քրիստոնեական հավատը ողջունում է նահատակությունը»[4]:

Եվ սա այն դեպքում, երբ իսլամական երկրներում այլ կրոնական դավանանքի տեր մարդկանց նկատմամբ կիրառվում են քրիստոնեական խորհրդանիշներ կրելու, եկեղեցիներ կառուցելու արգելքներ՝ վերջիններիս ենթարկելով տարաբնույթ հալածանքների: Մասնավորապես՝ Սաուդյան Արաբիայում, Ինդոնեզիայում և իսլամական այլ պետություններում քրեական պատժի սպառնալիքով խստագույնս արգելվում են քրիստոնեական պաշտամունքային կառույցների (վանքերի ու եկեղեցիների) շինարարությունը, քրիստոնեական խորհրդանիշներ կրելը, Ծննդյան տոներն ու Նոր տարին նշելը: Մինչդեռ Եվրոպա տեղափոխված, գերազանցապես չաշխատող և ԵՄ բյուջեից սնուցվող սոցիալական նպաստների հաշվին ապրող մահմեդականներն իրենց հանգրվան տրամադրած Ֆրանսիայում, Գերմանիայում, Բելգիայում և եվրոպական այլ երկրներում կառուցում են հազարավոր մզկիթներ, մեդ-

[1] Икромов Ш., «Дипломатия мечетей» в Центральной Азии: геополитика, начинающаяся с михраба, 3 декабря, 2020, https://www.caa-network.org/archives/21135

[2] Ենգիբարյան Ռ., XXI դար. իսլամական մարտահրավերներ, Եր., «Անտարես», 2016, էջ 3:

[3] «Հինգերորդ շարասյուն» են կոչվում տարբեր երկրներում գործող ազգայնական խմբավորումներն ու գործակալությունները, որոնք օգնում են յուրայիններին՝ զավթելու այդ երկրները ներսից: Այլ կերպ՝ թիկունքում թշնամու օգտին գործող ուժեր:

[4] Ենգիբարյան Ռ., XXI դար. իսլամական մարտահրավերներ, Եր., «Անտարես», 2016. էջ 5:

ռեսեներ, բացում իսլամական դպրոցներ՝ միաժամանակ տեղի իշխանություններից պահանջելով ի ցույց չդնել սեփական պատկանելությունը քրիստոնեությանը:

Ակնհայտ է, որ մզկիթների շինարարությունն ահռելի նյութական միջոցներ է պահանջում, իսկ պետության սոցիալական նպաստների հաշվին ապրող ներգաղթյալները ոչ մի կերպ չեն կարող իրենց թույլ տալ նման կառուցապատումներ իրականացնել: Ակամայից հարց է ծագում. այդ դեպքում ինչո՞ւ «բարերարներ» Թուրքիան, Սաուդյան Արաբիան, Կատարը, Պակիստանը, Իրանը և այլ երկրներ այդ ահռելի ֆինանսական միջոցները չեն ուղղում սովալլուկ արտագաղթյալների կարիքներին... Հարցադրումը տրամաբանական է սոցիալական հավասարության և մարդասիրական գաղափարներով առաջնորդվող հասարակության, բայց ոչ երբեք ամեն գնով սեփական գերիշխանությանը ձգտող իսլամական քաղաքակրթության համար:

Մահմեդականների բնակության երկրներում մզկիթների, մեդրեսեների ու դրպրոցների կառուցմանը, սովորաբար, հաջորդում է այնտեղ իմամներ, ուսուցիչներ, ինչպես և ռազմականացված ակտիվիստներ գործուղելը՝ կանխելու համար տեղական մշակույթի հետ ձուլվելու հնարավոր փորձերը:

Այդ կերպ իսլամական պետությունները Եվրոպան ներսից գրավելու նպատակ են հետապնդում: Առավել ևս, որ, ըստ իրենց կրոնական համոզմունքների, ոչ իսլամական երկրներում կառուցված մզկիթները համարվում են «Ալլահի նվաճած տարածքներ»: Թերևս, դրանով են հիմնավորվում հնարավորինս շատ և հնարավորինս մեծ մզկիթներ կառուցելու անհագ ձգտումները...

Արևմտյան որոշ երկրներում մզկիթները, ինչպես և ամեն մի երկրպագության տուն, լինի դա եկեղեցի, թե սինագոգ, օրինականորեն չեն կարող պետական ֆինանսավորում ստանալ: Արդյունքում, նոր մզկիթների նախագծերի ֆինանսավորման հիմնական աղբյուրն անհատների, բարեգործական կազմակերպությունների նվիրատվություններն են և նպատակային դրամաշնորհները[5]:

Հարավային Ամերիկայի ամենամեծ մզկիթներից մեկը՝ Թագավոր Ֆահդ իսլամական մշակութային կենտրոնը (King Fahd Islamic Cultural Centre), կառուցվել է 1996 թվականին Արգենտինայում՝ 34,000 քմ ընդհանուր մակերեսով: Շինարարության ֆինանսավորման համար Սաուդյան Արաբիայի թագավորը հատկացրել է շուրջ 15 միլիոն ԱՄՆ դոլար[6]:

Միայն Մեծ Բրիտանիայում, 2017 թվականի տվյալներով, գործում են 1621 մուսուլմանական մզկիթներ, որոնցից 181 խոշորները 1000 մարդ և ավելի տարողունակությամբ են, իսկ 10 խոշորագույնները՝ 4000 անձ և ավելի բարձր տարողունակությամբ[7]: Եվ սա այն դեպքում, երբ 2021 թ. դրությամբ, մահմեդականները Միացյալ Թագավորության բնակչության ընդամենը 6.3%-ն են (4.130.000 մարդ)[8]:

Գերմանիայում կառուցված մզկիթների, համապատասխան ընկերակցությունների և մահմեդականների պաշտամունքի վայրերի ստույգ թվի վերաբերյալ հստակ տեղեկություններ չկան, քանի որ, ըստ երկրում գործող կարգավորումների, կրոնական հաստատությունների գրանցման պահանջ գոյություն չունի: Բունդեսթագի հետազոտողների գնահատականներով, սակայն, Գերմանիայում գործում են առնվազն 2350 և առավելագույնը 2750 մզկիթներ ու համանման կրոնական միավորումներ[9]: Ընդ որում, իսլամի հետևորդների թիվը Գերմանիայում 4.750.000 մարդ է կամ երկրի բնակչության 5.7%-ը[10]:

ԱՄՆ-ում մզկիթների թիվն աճում է կա-

[5] Farrag E., Architecture of mosques and Islamic centers in Non-Muslim context. Alexandria Engineering Journal, 2017, # 56, http://dx.doi.org/10.1016/j.aej.2017.08.001, p. 615.
[6] Նույն տեղում:
[7] Statista, Number of mosques in the United Kingdom (UK) in 2017, https://www.statista.com/statistics/753720/masjids-in-uk/
[8] World Population Review, Muslim Population By Country 2021, https://worldpopulationreview.com/country-rankings/muslim-population-by-country
[9] Strack Ch., Mosques in Germany: Statistics hard to come by, 08.10.2018, https://www.dw.com/en/mosques-in-germany-statistics-hard-to-come-by/a-45806004
[10] World Population Review, Muslim Population By Country 2021, https://worldpopulationreview.com/country-rankings/muslim-population-by-country

ԱՂՅՈՒՍԱԿ 1

Մզկիթների քանակի շարժընթացն ԱՄՆ-ում 2010-2020 թթ.՝ ըստ նահանգների[11]

№	Նահանգը	Մզկիթների թիվը		Աճը՝ 2010 թ. համեմատ
		2020 թ.	2010 թ.	
1.	Նյու Յորք	343	257	33 %
2.	Կալիֆորնիա	304	246	24 %
3.	Տեքսաս	224	166	35 %
4.	Ֆլորիդա	157	118	33 %
5.	Նյու Ջերսի	141	109	29 %
6.	Իլինոյս	128	109	17 %
7.	Միչիգան	127	77	65 %
8.	Փենսիլվանիա	112	99	13 %
9.	Ջորջիա	99	69	43 %
10.	Օհայո	94	60	57 %

յուն և շարունակական տեմպերով. 2020 թ. ուսումնասիրությունները բացահայտել են գործող 2769 մզկիթ, ինչը նշանակում է, որ 2010 թ.-ի համեմատ (2106 մզկիթ) մզկիթաշինության ոլորտում արձանագրվել է 31% աճ: Փաստորեն, միայն ԱՄՆ-ում վերջին տասը տարվա ընթացքում կառուցվել է 663 մզկիթ[12]:

Աղյուսակ 1-ում ներկայացված են ԱՄՆ-ի 10 խոշոր նահանգներն ըստ մզկիթների քանակի: Միայն Նյու Յորքում տասը տարվա ընթացքում հիմնվել է 86, Կալիֆորնիայի և Տեքսասի նահանգներում՝ 58-ական նոր մզկիթ:

ԱՄՆ-ում 2020 թ. կատարված հետազոտությունների համաձայն՝ մզկիթների միջին տարեկան բյուջեն, առանց դրանցում գործող իսլամական դպրոցների վճարների և զաքայի[13], 276,500 ԱՄՆ դոլար է, ինչը 2010 թվականի (167,600 ԱՄՆ դոլար) համեմատ աճել է շուրջ 65%-ով[14]:

Այդուհանդերձ, 2020 թ. դրությամբ՝



ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

ԱՄՆ-ում նպատակային կառուցված մզկիթների համամասնությունն ըստ տարիների[15]

[12] Նույն տեղում, էջ 8:

[13] Զաքա (zakah) է կոչվում իսլամական օրենքով տարեկան վճարվող «պարտադիր բարեգործությունը», որը պարտավոր են վճարել բոլոր ինքնուրույն, ազատ, աշխատունակ և չափահաս մահմեդականներն իրենց տարաբնույթ եկամուտներից և գույքից (շարժական և անշարժ)՝ ի նպաստ կարիքավոր հավատակիցների:

[14] Bagby I., The American Mosque 2020: Growing and Evolving; Report 1 of the US Mosque Survey 2020: Basic Characteristics of the American Mosque. The Institute for Social Policy and Understanding, June 2021, p. 25.

[15] Bagby I., The American Mosque 2020: Growing and Evolving; Report 1 of the US Mosque Survey 2020: Basic Characteristics of the American Mosque. The Institute for Social Policy and Understanding, June 2021, p. 10.

ԱՄՆ-ում հիմնադրված մզկիթների միայն 37%-ն է նպատակային կառուցված (2000 թ.-ի համար այդ ցուցանիշը 26% էր)[16], մինչդեռ դրանց մեծամասնությունը ստեղծվել է նախկին եկեղեցիների, առանձնատների և տնամերձ շինությունների ձեռքբերման կամ վարձակալման ու վերափոխման արդյունքում: ԱՄՆ-ում նպատակային կառուցված մզկիթների մասնաբաժինը գործողների ընդհանուր թվաքանակում ներկայացված է գծապատկեր 1-ում, ըստ որի՝ 2020 թ. գործող շուրջ 1744 մզկիթ գործունեություն է ծավալում ի սկզբանե այլ նպատակներով կառուցված շինություններում:

Այսպիսով՝ մի կողմից մահմեդականները բարերարների միջոցով հսկայական գումարներ են ծախսում աշխարհով մեկ հսկայական և շքեղ մզկիթների կառուցման համար, իսկ մյուս կողմից՝ զավթում կամ գնում են նախկին եկեղեցիների կամ այլ կրոնական սրբավայրերի շինություններն ու տարածքները՝ դրանք վերափոխելով մզկիթների:

Թեև նույն ճակատագրին արժանացել են հազարավոր քրիստոնեական սրբավայրեր, մզկիթի վերափոխված ամենահայտնի քրիստոնեական կառույցը, թերևս, Արևելյան ուղղափառ եկեղեցու պատրիարքության նստավայր հանդիսացող Սբ. Սոֆիայի տաճարն է: Վերջինս որպես քրիստոնեական սրբավայր է ծառայել մ.թ. 360 թ.-ից՝ իր հիմնադրման պահից (տաճարի շինարարությունն ավարտվել է մ.թ. 537 թ.) մինչև երբեմնի Բյուզանդական կայսրության մայրաքաղաք Կոստանդնուպոլսի անկումը (1453 թ.), երբ Օսմանյան կայսրության տիրապետության հաստատմամբ տաճարը վերափոխվեց մզկիթի: Քրիստոնեական խորհրդանիշներ հանդիսացող գմբեթների խաչերը, զանգերը, սրբապատկերները փոխարինվեցին իսլամական տարրերով՝ միհրաբ, մինբար և չորս մինարեթ, իսկ խճանկարներից շատերը պարզապես ծեփապատվեցին (տես նկար 1 և 2):

1931 թ. Սոֆիայի տաճարը ստացավ նոր՝ աշխարհիկ կառույցի կարգավիճակ՝ Թուրքական Հանրապետության որոշմամբ 1935 թ. վերագործարկվելով որպես Այա Սոֆիա թանգարան: Սակայն, 2020 թ. հուլիսի 10-ին Թուրքիայի պետական խոր-

ՆԿԱՐ 1

Սուրբ Սոֆիայի քրիստոնեական տաճարը

ՆԿԱՐ 2

Սուրբ Սոֆիայի տաճարը՝ մզկիթի կարգավիճակում

[16] Bagby I., The American Mosque 2020: Growing and Evolving; Report 1 of the US Mosque Survey 2020: Basic Characteristics of the American Mosque / The Institute for Social Policy and Understanding, June 2021, p. 10.

[3] World Bank database, GDP per capta in 2020 (current US$), https://data.worldbank.org/indicator/NY.GDP.PCAP.CD?end=2020&start=2020&view=map

[4] Global information and education on HIV and AIDS, HIV and AIDS in Botswana, available at https://www.avert.org/professionals/hiv-around-world/sub-saharan-africa/botswana

հուրդը չեղարկեց Նախարարների խորհրդի՝ Սոֆիայի մզկիթը թանգարան դարձնելու մասին որոշումը, և նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը հրամանագիր ստորագրեց Այա Սոֆիայի թանգարանի կարգավիճակը չեղարկելու մասին՝ այն դարձյալ վերափոխելով մզկիթի[17]:

Այս ամենի հետ մեկտեղ, մի տեսակ անհաղթահարելի ցանկություն է առաջանում կուրորեն հավատալու դեռևս նախորդող դարաշրջաններում արված հայտնի կանխագուշակություններին, ըստ որոնց՝ «քրիստոնյաները կվերադարձնեն Կոստանդնուպոլիսը, և դա կկատարվի այն բանից հետո, երբ Սուրբ Սոֆիան դարձյալ կվերածվի մզկիթի»[18]: Կարծես թե, կանխորոշված «ճակատագրական սխալն» Էրդողանն արդեն իսկ թույլ է տվել, մնում է սպասել իրադարձությունների հետագա ընթացքին...

Մեկ այլ մարգարեության համաձայն՝ «Միջին Արևելքը բոլորի աչքի առջև կվերածվի պատերազմների թատերաբեմի, որոնց մասնակցություն կունենան ռուսները: Սակայն, Թուրքիան պարտություն կկրի, Թուրքիային կջախջախեն նրա դաշնակիցները: Թուրքիան կկործանվի և մեկընդմիշտ կջնջվի քարտեզի վրայից: Երկիրը կբաժանեն երեք-չորս մասի. հույները, քրդերը և հայերը կվերցնեն իրենց պատմական հողերը: Հետհաշվարկն արդեն սկսված է...»[19]:

Ինչ իմանաս... Գուցեև...

[17] "Hagia Sophia: Turkey turns iconic Istanbul museum into mosque". BBC. 10 July 2020. Retrieved 10 July 2020.

[18] Тарасов С., «Вместо Турции может появиться новая Византийская империя», Regnum, 16 июня, 2020, https://regnum.ru/news/2982659.html

[19] «Турция будет уничтожена»: предсказания старца Паисия Афонского, 6 декабря, 2015, https://newsarmenia.am/news/in_the_world/turtsiya-budet-unichtozhena-predskazaniya-startsa-paisiya-afonskogo-/

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ենգիբարյան Ռ., XXI դար. իսլամական մարտահրավերներ, Եր., «Անտարես», 2016, 168 էջ:
2. Икромов Ш., «Дипломатия мечетей» в Центральной Азии: геополитика, начинающаяся с михраба, 3 декабря, 2020, https://www.caa-network.org/archives/21135
3. Тарасов С., Вместо Турции может появиться новая Византийская империя, Regnum, 16 июня, 2020, https://regnum.ru/news/2982659.html
4. «Турция будет уничтожена»: предсказания старца Паисия Афонского, 06 декабря, 2015, https://newsarmenia.am/news/in_the_world/turtsiya-budet-unichtozhena-predskazaniya-startsa-paisiya-afonskogo-/
5. "Hagia Sophia: Turkey turns iconic Istanbul museum into mosque". BBC. 10 July 2020. Retrieved 10 July 2020.
6. Bagby I., The American Mosque 2020: Growing and Evolving; Report 1 of the US Mosque Survey 2020: Basic Characteristics of the American Mosque. The Institute for Social Policy and Understanding, June 2021, p. 4-25.
7. Farrag E., Architecture of mosques and Islamic centers in Non-Muslim context. Alexandria Engineering Journal, 2017, # 56, http://dx.doi.org/10.1016/j.aej.2017.08.001, p. 615.
8. Statista, Number of mosques in the United Kingdom (UK) in 2017, https://www.statista.com/statistics/753720/masjids-in-uk/
9. Strack Ch., Mosques in Germany: Statistics hard to come by, 08.10.2018, https://www.dw.com/en/mosques-in-germany-statistics-hard-to-come-by/a-45806004
10. World Population Review, Muslim Population By Country 2021, https://worldpopulationreview.com/country-rankings/muslim-population-by-country

Анна ПАХЛЯН
Исследователь исследовательского центра «Амберд», АГЭУ.
кандидат экономических наук, доцент

А ВЫ ЗНАЕТЕ, ЧТО...?

СТРОИТЕЛЬСТВО МЕЧЕТЕЙ КАК АЛЬТЕРНАТИВНАЯ СТРАТЕГИЯ «ЗАВОЕВАНИЯ ТЕРРИТОРИЙ»...

Ведущие исламские страны, такие как Турция, Саудовская Аравия и Катар, в течение некоторого времени приступили к «священной» миссии финансирования массового строительства мечетей по всему миру. Более того, в контексте последовательной «дипломатии мечетей» строительство мечетей не только обеспечивает религиозное присутствие ислама в различных частях мира, но также рассматривается как мирная или альтернативная стратегия «завоевания территорий» изнутри. Примечательно, что только небольшая часть мечетей, число которых стремительно увеличивается с каждым годом, строится целенаправленно, в то время как большинство созданных новый мечетей действуют на территории других религиозных святынь, которые были преобразованы в мечети.

Ключевые слова: *исламская идеология, дипломатия мечетей, мечети, строительство, иностранное финансирование*

Anna PAKHLYAN
Researcher at «Amberd» Research Center,
PhD in Economics, Associate Professor, ASUE

DO YOU KNOW THAT...?

CONSTRUCTION OF MOSQUES AS AN ALTERNATIVE STRATEGY FOR «CONQUERING TERRITORIES»...

Leading Islamic countries, such as Turkey, Saudi Arabia and Qatar, have for some time embarked on the "sacred" mission of funding mass mosque construction around the world. Moreover, in the context of backward "mosque diplomacy", the construction of mosques not only ensures the religious presence of Islam in different parts of the world, but is also seen as a peaceful or alternative strategy of "conquering territories" from inside. It is noteworthy that only a small part of the mosques, the number of which is increasing year by year, are purposefully built, while the majority of the newly established mosques operate in the areas of other religious shrines that have been converted into mosques.

Keywords: *Islamic ideology, mosque diplomacy, mosques, construction, foreign funding*